ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-22/15

ք. Դիլիջան «25» 08 2022 թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,,Խաչմիշ2ին,, ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խաչատուր Համզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.11.2022թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 7 442 939(յոթ միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար ինը հարյուր երեսունինը) ՀՀ դրամ, որից 1 240 490 (մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար չորս հարյուր իննսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դիլիջանի համայնքապետարան	«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55	Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան ,
ՀՎՀՀ 07618909	Նալբանդյան 1/5
ՀՀ 900402081013	ՀՎՀՀ՝ 07613551
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ՝ 163 508 005 945
գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Իջևանի» մ/ճ
Համայնքի ղեկավար Գ. Սարգսյան	Տնօրեն՝ Խաչատուր Համզյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
« 25 » 08 2022 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Հիմնա-վորում Шифр норматива	Աշխատանքի անվանումը/Наименование работ	Չափ. միավ. Единицы измерения	Քա-նակ Кол-во	1 միավ.ընդ. արժեքը հազ. դրամ / стоимост. Единицы тыс драм	Ընդհանուր արժեքը հազ. դրամ / Общая сумма тыс. драм	Ընդամենը կշիռը %-ով
1	2	3	4	5	6	7	8
		Քանդման աշխատանքներ/ Демонтажные работы					2,87%
	46-95	Լինոլիումե հատակի քանդում /Разборка полов из линолеума	100 մ^2	0,215	19,80	4,257	
	46-103	Փայտե հատակի քանդում/Разборка чернопола	100 մ^2	0,433	52,00	22,516	
	`11-63	Տափագերանների և միջադիրների քանդում/ Разборка дереваных лагов	100 մ^2	0,433	33,00	14,289	
	`46-80	Միջնորմների քանդում/Демонтаж перегородок	մ^3	3,580	8,95	32,041	
	11-94Վ	Գաջի սվաղի քանդում պատերից /Очистка стен от гипсовой штукатурки	100 մ^2	0,7954	19,14	15,224	
	11-94Վ	Գաջի սվաղի քանդում շեպերից/Очистка дверных и оконных откосов от гипсовой штукатурки	100 մ^2	0,136	19,14	2,611	
	`46-35	Ց/ա սվաղի քանդում շենքի ճակատային պատերից/Очистка наружних стен от ц/пещханной штукатурки	100 մ^2	0,941	19,22	18,080	
	`46-80	Աստիճանահարթակի բետոնի քանդում/Демонтаж лестничной площадки	մ^3	0,710	23,31	16,550	
	23-174Վ	Գոյություն ունեցող մ/պ դռների ապամոնտաժում/ Разборка металопл. дверей	100 մ^2	0,12	129,50	15,799	
	17-61 k=0,4	Զուգարանակոնքի ապամոնտաժում/ Демонтаж унитаза	հատ	2,0	1,40	2,800	
	16-130 k=0,4	Լվացարանի ապամոնտաժում /ոտնակով/Демонтаж умывальника	կ-տ	2,0	1,23	2,460	
	`46-99	Բետոնի սալվածքի քանդում/ Демонтаж бетоной отмостки	մ^3	0,750	18,50	13,875	
		Կառուցման աշխատանքներ / Строительнэ работы			0,00	0,000	12,95%
	11-5	Ավազակոպճային լիծքի իրականացում / Засыпка песчано гравия	մ^3	20,000	8,77	175,400	

	6-1.	Բետոնե շերտի իրականացում B-12,5 դասի բետոնից,/ Слой бетона B12.5 класса	մ3	3,530	37,75	133,258	
	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ./Ц/песчаный слой 30 мм	100 մ2	0,440	181,90	80,036	
	11-135	Պրեսգրանիտե հատակի կառուցում /Полы из пресгранит	100 մ^2	0,168	923,00	155,064	
	15-82	Շրիշակների կառուցում պրեսգրանիտից H=10 սմ / Плинтуса из пресгранита H=10 см	100մ^2	0,016	939,00	14,742	
	11-191	Լամինատե հատակների կառուցում սպունգով և շրիշակներով/ Укладка полов из ламината сплинтусами и спленкой полиэтиленовой	մ^2	26,2	6,29	164,890	
		Պատեր և միջնորմներ / Стены и перегородки			0,00	0,000	19,35%
	8-140	Միջնորմների կառուցում 20 սմ հաստ. Պեմզաբլոկից Кладка перегородок из пемзаблоков 200 мм	մ^3	3,93	26,63	104,673	
	15-246	Պատի գաջի սվաղի իրականացում բարելված որակի Гипсовая штукатурка стен и перегородок	100 մ^2	0,922	146,13	134,729	
	15-277-1	Շեպերի սվաղում գաջի շաղախով Гипсовая штукатурка откосов дверних и оконных проемов	100 մ^2	0,1364	535,56	73,050	
	15-201	Պատերի սվաղ ց/ա շաղախով/Ц/песчаная штукатурка	100մ2	0,598	163,21	97,597	
	10-64	Կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքով, 9մմ գիպսոկարտոնից մետաղական պրոֆիլների վրա /Установка подвесных потолков из гипсокартона 9,0 мм на оцинкованой металическойкаркасной основаниии	մ^2	43,00	5,89	253,055	
	15-660	Պատերի ներկում լատեքսով /կիսափայլ/ Окраска стен и перегородок водоэмусионной краской	100 մ^2	1,520	197,51	300,211	
	15-661	Առաստաղների ներկում լատեքսով /կիսափայլ/ Окраска потолков водоэмусионной краской	100 մ^2	0,430	211,25	90,836	
	14-419	Շեպերի ներկում լատեքսով /կիսափայլ/ SHEN holding Окраска откосов дверей и окон водоэмусионной краской	100մ^2	0,1364	198,96	27,138	
		Բացվածքներ/ Проемы			0,00	0,000	9,24%
	Ինֆ. տեղ.	Մետաղապլաստե դռների տեղադրում 60մմ հաստ պրոֆիլ, սպիտակ գույն, բանալիով/Металопластиковэ двери иностр. производства 6 см толщ. двустворчатый	մ^2	9,20	56,13	516,366	
		Սալվածքի կառուցումs/ Строительство отмостки			0,00	0,000	3,07%
	`46-99	Գոյություն ունեցող բետոնի սալվածքի քանդում/ Демонтаж бетоной отмостки	մ^3	1,900	18,56	35,256	
	1-962	Հիմնատակի փորում ձեռքով, /Выемка фундамента	100 մ^3	0,038	398,95	15,160	
	11-6	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 100մմ հաստությամբ/Слой щебня 100 мм	մ^3	1,900	13,52	25,680	
	6-1.	Բետոնե սալվածքի իրականացում B-12,5 դասի բետոնից, /Укладка бетонной отмоски B12.5 класс 100 мм	մ3	2,530	37,75	95,514	
		Միջնորմների ամրանավորում/ Армирование перегородок			0,00	0,000	0,45%
	Ինֆ. տեղ.	Ամրան/Арматура A-IՖ 8մմ/мм	տ	0,01677	597,00	10,012	
	Ինֆ. տեղ.	Դյուբել/Дюбель Ф 10մմ/мм	հատ	24,00000	0,50	12,066	

	Ինֆ. տեղ.	Անկյունակ/ Угольник 80*50*5	մ	0,84000	3,64	3,062	
		Բարավորի կառուցում/ Строительство перемычка			0,00	0,000	0,15%
	6-169	Ե/Բետոնե բարավորի կառուցում Վ-15 դասի բետոնից/ Строительство ж/б перемычки В15 класс	$մ^3$	0,048	78,86	3,785	
	Ինֆ. տեղ.	Ամրան//Арматура А-Ի Φ 8մմ/мм	տ	0,00224	597,00	1,337	
	Ինֆ. տեղ.	Ամրան//Арматура А500 Φ14մմ/мм	տ	0,006	593,51	3,442	
		Արտաքին հարդարման աշխատանքներ/ Отделка наружных работ			0,00	0,000	6,90%
	15-201	Արտաքին պատերի սվաղ g/ա շաղախով/Штукатурка наружных стен ц/песчаным раствором	100մ2	0,940	163,21	153,413	
	11-22	Շեպերի g/ա սվաղ/Ц/песчаная штукатурка откосов	$մ^2$	6,800	4,79	32,554	
	15-522	Արտաքին պատերի և շեպերի ներկում ֆասադային ներկով/Окраска стен и откосов водоустойцхивойкраской	100 $մ^2$	1,0080	198,28	199,868	
		Պատերի ուժեղացում և բացվածքի լրացում/ Усиление стен и заполнение проемов			0,00	0,000	1,79%
	Ինֆ. տեղ.	Ամրան/Арматура А500 Φ10մմ/мм	տ	0,01408	610,09	8,590	
	Ինֆ. տեղ.	Ցանց/Сетка арматурная А-Ի Φ 6մմ ամրանից/	տ	0,00348	597,00	2,078	
	Ինֆ. տեղ.	Պողպատե ամրանային, եռակցված ցանց/Сетка арматурная, Вр d=3,0մմ,	$մ^2$	59,800	0,87	52,161	
	46-51	Φ-12մմ անցքերի բացում պատերում L-200մմ/ Просверление стен d=12 мм L=200 мм	100 հատ	0,890	41,54	36,973	
		Թեքահարթակ և աստիճանահարթակ/Пандуси лестничныи марш			0,00	0,000	5,53%
	1-962	4-րդ կարգի գրունտում հիմքերի քանդում ձեռքով/Выемка фундамента в IV классе грунтов в ручбую	100 $մ^3$	0,059	398,95	23,538	
	11-6	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 100մմ հաստությամբ/ Слой щебня 100 мм	$մ^3$	0,700	13,52	9,461	
	6-26	Բուտաբետոնե հիմքերի իրականացում Վ-7,5 բետոնից Бутабетон В7.5 класса	$մ^3$	0,730	35,13	25,648	
	15-74	Երեսպատում բազալտե 30մմ սալերով Облицовка базалтовыми плитами 30 мм	10մ2	0,930	154,20	143,410	
	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ./Ц/песчаный выравнивающий слой 30 мм	100 մ2	0,093	181,95	16,921	
	6-26	Հարթակի բետոնացում Վ-15 դասի բետոնից	$մ^3$	0,790	45,59	36,014	
	Ինֆ. տեղ.	Ցանց 200*200մմ A500 Φ10մմ ամրանից/Сетка арматурная Ø10 мм 200*200	տ	0,08820	610,09	53,810	
		Բռնաձող / Перила			0,00	0,000	2,04%
	16-46	Պողպատե խողովակի տեղադրում d=48*2,5մմ/Труба Ø48*2,5 мм	մ	26,400	2,66	70,317	

	Ինֆ. տեղ.	Հենարանային տարրեր խողովակից,24հատ /Опорный элемент 24 шт.	մ	19,20000	1,96	37,597	
	Ինֆ. տեղ.	Պողպատե ծնկալ Φ50*2,5մմ/Отвод Ø50*2,5 мм	հատ	8,00000	0,73	5,862	
		Հովհար/Козырек			0,00	0,000	6,21%
	9-49	Պողպատե էլեմենտների մոնտաժում /Монтаж стал.ных элементов	տ	0,298	270,11	80,389	
	Ինֆ. տեղ.	Պողպ. 60x60x3մմ խողովակից կանգնակ/ Профильная ртуба/стойка/.60x60x3мм	մ	33,000	3,68	121,317	
	Ինֆ. տեղ.	Պողպ. 60x60x3մմ խողովակից ծպեղնատոք /Профильная ртуба/стропильная нога/.60x60x3мм	մ	13,200	3,68	48,527	
	Ինֆ. տեղ.	Պողպ. 40x25x2մմ խողովակից կավարամած /Профильная ртуба/обрещетка/.40x25x2мм	մ	24,200	1,31	31,815	
	Ինֆ. տեղ.	Ամրան/ Арматура А500 Φ12մմ/мм	տ	0,00360	610,09	2,196	
	12-268	Ծածկի կառուցում պրոֆ.ցինկ.թիթեղից ԿՊ - 21 - 0,55 հաստ. Перекрытие из профилир.оцинков.листа КП-21-0,55мм	100 մ^2	0,100	629,44	62,944	
		Ներքին էլ. Մատակարարում / Внутрений элэктромонтаж			0,00	0,000	4,44%
	46-57	Ակոսների փորում 20*15 / Вэмка акосов	100մ	1,35	37,27	50,313	
	8-599-1	Լուսատուի տեղադրում 18W ԼԵԴ լամպով / Установка потолочных светильников 18 W	հատ	4,0	11,46	45,840	
	8-591-2	Էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ/ Выключатель	հատ	4,00	2,31	9,225	
	Ինֆ. տեղ.	Տուփ բաժանարար/ Распределительная коробка	100հատ	0,02	16,34	0,327	
	Ինֆ. տեղ.	Տուփ վարդակների և անջատիչների/Коробка для выключателей	100հատ	0,11	9,43	1,037	
	8-591-7	Միաբևեռ վարդակի ՍԻ~220Վ,Ιցր8=6Ա տեղադրում,հողանցումով/ Монтаж разетки с зазамлением	հատ	7,0	2,33	16,316	
	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*1,5մմԱ/ Монтаж кабеля ВВГ 2*1.5 мм	100 մ	0,4	43,24	15,136	
	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*2.5մմԱ/Монтаж кабеля ВВГ 2*2.5 мм	100 մ	0,6	65,38	39,229	
	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՎՎԳ 3*4մմԱ/Монтаж кабеля ВВГ3*4 мм	100 մ	0,4	114,32	45,726	
	8-562-1	Խմբային վահան /պլաստմասե արկղ/ 4մոդուլ Щиток для 4-х модулей\пластмасщвый ящик\	հատ	1,00	6,57	6,574	
	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 16 Ա Автоматич.предохранитель16А	հատ	4,0	3,14	12,554	
	15-247-1	Ակոսագծերի գաջի սավաղում/ Гипсовая тукатурка бороздов	100մ^2	0,027	221,31	5,975	
		Ջրամատակարարում և կոյուղի/ Водоснабжение и канализация			0,00	0,000	2,94%
	16-135	Փականի տեղադրում d=15մմ/ Установка крана d=15 мм	հատ	4,00	5,64	22,558	

	16-130	Լվացարանի տեղադրում /ոտնակով/Установка умывакьника	հատ	2,0	16,37	32,741	
	17-61	Զուգարանակոնքի տեղադրում/ Установка унитаза	հատ	2,0	45,92	91,833	
	16-130	Լվացարանի ծորակ-խառնիչի տեղադրում d=15մմ/ Сместител. для умывальника	հատ	2,0	8,48	16,967	
		Գազաֆիկացում/ Газификация			0,00	0,000	2,94%
	1-962	Հենասյուների բների փորում 4-րդ կարգի գրունտում ձեռքով, /Выемка фундамента в IV классе грунтов под опоры	100 մ³	0,005	398,95	1,795	
	9-153	Հենասյուների պատրաստում և տեղադրում d=40մմ պողպատե խողովակներից,8մУстановка опорних труб d=40 мм	տ	0,015	945,51	14,183	
	6-1.	Բետոնացում B-12,5 դասի բետոնով,/Бетонирование B12.5 класс	մ3	0,450	37,75	16,989	
	16-42	Գազի պողպատյա խողովակի մոնտաժում Φ20x2.5մմМонтаж газопровода из мет. труб d=20*2.5 мм	մ	3,000	1,30	3,900	
	16-43	Գազի պողպատյա խողովակի մոնտաժում Φ25x2.5մմМонтаж газопровода из мет. труб d=25*2.5 мм	մ	17,000	1,46	24,772	
	2ուկա	Անկյունակ d=20մմ /Отвод d=25мм	հատ	3,00	0,31	0,943	
	16-134	Φ20 գնդիկավոր փականի տեղադրում /Шаровой кран d=20 мм	հատ	1,000	5,61	5,609	
	16-134	Φ20 գազի խցանային փականի տեղադրում/Пробкран d=20 мм	հատ	1,000	5,12	5,119	
	Ինֆ. տեղ.	Մեմբրանային, գազի, G6C, GS-84-06C, 1" արտաքին պտուտակ 0.5 bar, 10մա/ժ, մետաղական արկղով/Газовый счетчик G-6 в мет. ящике	կոմպլ	1,000	40,85	40,847	
		Գազի ճնշման կարգավորիչ, GS-64-22, մուտք. 3/4", ելք.1" (պտուտակային), 6 bar, 10մա/ժ /Регулятор газового давления 10 куб.м/час	կոմպլ	1,000	31,42	31,421	
	16-39	Պաշտպանիչ պատյանի տեղադրում պողպատե խողովակից d=32մմ /Стальной. футляр d32 мм	մ	0,600	1,74	1,046	
	46-51	Φ-20մմ անցքերի բացում պատերում /Просверливание дырок в стенах	100 հատ	0,010	41,54	0,415	
	2ուկա	Շրջակապ /Крепеж d=25 мм	հատ	5,00	0,52	2,618	
	19-73	Գազատարի փչամաքրում /Продувка газопровода	մ	20,000	0,51	10,282	
	16-219	Գազատարի փորձարկում/ Испытание газопровода	100մ	0,200	7,95	1,589	
	15-614	Խողովակների և հենասյուների յուղաներկում 2 շերտ /Окраска газопроводов и опор 2 слоя	100մ2	0,023	126,23	2,929	
		Ջեռուցում/ Отопление			0,00	0,000	19,13%
	18-239	Ալյումինե մարտկոցների տեղադրում / Установка алюминиевые радиаторы отопления	ԷԿՄ	9,52	0,64	6,093	
	Ինֆ-տեղ	Ալյումինե ջեռուցիչ մարտկոց H=500/Алюминиевые радиаторы отопления H=500 мм	հատ	34,00	5,24	178,160	
	16-261	Ալյումինե շերտով պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում d=15x3մմ /փորձարկումով/Полипропиленовые трубы с алюминиевым слоем для горячей воды PN20 d15*3.25 мм	գմ	6,00	3,25	19,500	

	16-262	Այլումինե շերտով պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում d=25x3.25մմ /փորձարկումով/Полипропиленовые трубы с алюминиевым слоем для горячей воды PN20 d25*3.25 мм	գմ	16,00	3,09	49,440	
	16-135	Կարգավորիչ փականի տեղադրում d=15մմ/Кран регулирования d15 мм	հատ	8,00	6,39	51,120	
	22-366	Պոլիպրոպիլենային,ձևավոր մասեր/Фитинги для полипропиленовых трубы	հատ	16,00	1,59	25,440	
	22-366	Անկյունակ պոլիպրոպիլենային, 90º d=15մմ /Полипропиленовые отводы d15 мм	հատ	8,00	1,63	13,040	
	16-135	PPR փականի տեղադրում d=25մմ /Кран d=25 мм	հատ	4,00	6,39	25,560	
	16-135	Դատարկման փականի տեղադրում d=20մմ /Кран для слива d=20 мм	հատ	1,00	5,63	5,630	
	16-134	Օդահանիչի տեղադրում 1/2"/ Воздухоотвод 1/2	հատ	4,00	2,77	11,080	
	18-71	24Կվտ փակ այրման խցով պատի ջեռուցման կոնդենսացիոն կաթսայի տեղադրում /Котел с закрытым камерой сгорания(24Квт)	հատ	1,00	628,79	628,790	
	18-149	Մեմբրանային ընդարձակման բաքի տեղադրում 12լ /Расширительный бак V=12 л	հատ	1,00	33,27	33,270	
	46-51	Անցքերի բացում պատերում /Просверливание дырок в стенах	100 հատ	0,030	41,54	1,246	
	2ուկա	Խողովակների ամրակապիչներ/Крепежи труб	հատ	32,00	0,31	9,920	
	16-219	Համակարգի հիդրավլիկ փորձարկում/Испытание системы	100մ	0,22	7,77	1,710	
	2ուկա	Ցինկապատ թիթեղից խողովակ Φ100մմ /օդատար ուղի//Оцинкованая труба для вентиляционого канала Ø100 мм	մ	4,00	2,18	8,720	
		Ընդամենը				5587,792	100,00%
		11 % Շահույթ				614,657	
		Ընդամենը				6202,449	
		20% ԱԱՀ				1240,490	
		Ընդամենը				7442,939	

Կապալառուն աշխատանքները կատարում է Դիլիջան համայնք, Աղավնավանք բնակավայր, Առաջին փողոց թիվ 59 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար՝ Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան ,
Նալբանդյան 1/5
ՀՎՀՀ՝ 07613551
Հ/Հ՝ 163 508 005 945
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Իջևանի» մ/ճ
Տնօրեն՝ Խաչատուր Համզյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 25 » 08 2022 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	Մինչև 31.08.2022
2	Քանդման աշխատանքներ	01.09.2022	15.09.2022
3	Հատակի կատուցում	10.09.2022	20.09.2022
4	Բետոնային աշխատանքներ	21.09.2022	31.09.2022
5	Միջնորմի կառուցում	01.10.2022	10.10.2022
6	Թեքահարթակի աստիճանավանդակի և սալվածքի կառուցում	10.10.2022	30.10.2022
7	Դռների տեղադրում	25.10.2022	30.10.2022
8	Արտաքին հարդարում	31.10.2022	20.10.2022
9	Ներքին հարդարում	21.10.2022	10.11.2022
10	Գազաֆիկացում և ջեռուցում	11.11.2022	20.11.2022
11	Շին աղբի հավաքում, բարձում, տեղափոխում	21.11.2022	30.11.2022
ԸՆԴԱՄԵՆԸ՝ Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգում		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը**	**30.11.2022**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան ,
Նալբանդյան 1/5
ՀՎՀՀ՝ 07613551
Հ/Հ՝ 163 508 005 945
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Իջևանի» մ/ճ
Տնօրեն՝ Խաչատուր Համզյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 25 » 08 2022 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100	Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգման աշխատանքների	0	0	0	0	0	0	0	0	3721469	7442939	7442939	7442939	7442939

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով.*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան,
Նալբանդյան 1/5
ՀՎՀՀ՝ 07613551
Հ/Հ՝ 163 508 005 945
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Իջևանի» մ/ճ
Տնօրեն՝ Խաչատուր Համզյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն